

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2019 թվականի սեպտեմբերի 11-ին ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 11-րդ <<Բ>> դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները ,դասղեկ Վարդիթեր Սարգսյանը, տնօրենի մասնագիտացված կրթական աջկցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում՝

- 1.2019-2020 ուստարվա խնդիրներն ու անելիքները և դասարանի ծնողխորհրդի նախագահի և անդամների ընտրության հարցը:
- 2.Դասագրքերի վարձավճարները, դրանց հավաքագրումն ու հանձնումը:
- 3.Ընթացիկ հարցեր(կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

1. Լսեցին.- 2019-2020 ուստարվա խնդիրներն ու անելիքները և դասարանի ծնողխորհրդի նախագահի և անդամների ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ՝ Վարդիթեր Սարգսյանը, ով ներկայացրեց 2018-2019 ուստարում 10-րդ <<Բ>> դասարանի կատարած աշխատանքները և ներկայացրեց նոր՝ 2019-2020 ուստարվա խնդիրներն ու անելիքները: Վարդիթեր Սարգսյանը առաջարկեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել ծնողական խորհուրդ:

Որոշեցին.

- 1.Նախագահի թեկնածու առաջադրել և վերահաստատել Անի Դավթյանին,
- 2.Նարինե Հովհաննիսյան / անդամ/
- 3.Լիլիկ Հովհաննիսյան /անդամ/
- 4.Քրիստինե Բաղայան /անդամ/
- 5.Անահիտ Հայրապետյան /անդամ/

2. Լսեցին.- Դասագրքերի վարձավճարները, դրանց հավաքագրումն ու հանձնումը: Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

Դասղեկ՝ Վարդիթեր Սարգսյանը նշեց,որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների հարցում: Դասղեկը հորդորեց ծնողներին՝ սերտ

կապ պահպանել ուսուցիչների և դպրոցի հետ, ինչը կխթանի ճիշտ ու արդյունավետ կազմակերպել սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել անհրաժեշտ գրենական պիտույքներ, նշված ժամկետում սկսել և ավարտել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը: Դասղեկը ներկայացրեց, որ դասագրքերի վարձավճարները, հավաքագրումն ու հանձնումը գրադարանավարուհուն՝ կատարվում է ծնողական խորհրդի նախագահի և անդամների միջոցով:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տետրեր և գրենական պիտույքներ, կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը: Դասագրքերի վարձավճարների հավաքագրումն ու հանձնումը կատարել ժամանակին՝ համապատասխան ցուցակով:

3. Լսեցին.- Ընթացիկ հարցեր/կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասղեկ՝ Վարդիթեր Սարգսյանը նշեց, որ նոր ուսումնական տարում դպրոցը աշխատելու է հնգօրյա ռեժիմով /9-00--15-00/: Նա հորդորեց ծնողներին հետևել, որ իրենց երեխաները հավուր պատշաճի հաճախեն դպրոց: Պահել ծնող-դասղեկ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.


Հաշվի առնելով այն, որ սովորողները ավարտական փուլում են, պետք է առավելագույնս ուշադիր լինել նրանց հաճախումներին, դասերին պատրաստվածությանը և աշակերտավայել կարգապահությանը:

Ծնողական խորհրդի նախագահ՝



/Անի Դավթյան/

Քարտուղար՝



/Լիլիկ Հովհաննիսյան/